ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները

Քաղաքական կուսակցությունները յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության գոյության և զարգացման անհրաժեշտ և կարևոր բաղադրիչ են: Վերջիններս ապահովում են ոչ միայն քաղաքացիների՝ հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցությունը, այլ դրանով նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Ուստի, քաղաքական կուսակցությունների ազատ և արդյունավետ գործունեության իրականացման համար անհրաժեշտ իրավական նախադրյալների ստեղծումը կարևոր նախապայման է ժողովրդավարական հասարակության կայուն զարգացման համար:

Անկախության տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում կուսակցությունների գործունեության բարեփոխմանն ուղղված շարունակական քայլեր են ձեռնարկվել: Մինչև գործող օրենքի ընդունումը կուսակցությունների իրավական կարգավիճակի հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 26.02.1991թ. ընդունված «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքով, որով, ըստ էության, հիմք դրվեց կուսակցությունների ստեղծման և գործունեության ընթացքում առաջացող հարաբերությունների իրավական կանոնակարգմանը:

2002թ. հուլիսի 3-ին ընդունվեց նոր՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ գործող օրենքը, որը նախորդ օրենքի համեմատ առավել համապարփակ կարգավորումներ է նախատեսում կուսակցությունների կազմակերպման և գործունեության վերաբերյալ: Այդուհանդերձ, հաշվի առնելով 2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունները, «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի ՆՀ-170-Ա հրամանագիրը, ինչպես նաև միջազգային փաստաթղթերով կուսակցությունների կազմակերպման և գործունեության վերաբերյալ ներպետական իրավակարգավորումներին առաջադրվող պահանջները՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու կուսակցությունների վերաբեյալ նոր՝ սահմանադրական օրենք:

Կուսակցությունների վերաբերյալ գործող իրավակարգավորումներում արձանագրվել են հետևյալ հիմնական խնդիրները:

1) **Պետական գրանցումը:** Ներկայումս գործող օրենքով պետական գրանցման պահին կուսակցությունը պարտավոր է ունենալ ոչ պակաս, քան 200 անդամ: Պետական գրանցման պահին կուսակցությունը պարտավոր է ունենալ տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում, ներառյալ՝ Երևանում: Սակայն պետական գրանցման պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո, կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 2000 անդամ, ընդ որում, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ոչ պակաս, քան 100 անդամ, և տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, ներառյալ՝ Երևան քաղաքում:

Միջազգային պրակտիկայում կուսակցությունների պետական գրանցման նպատակով ներկայացվող պահանջները, հատկապես անդամների թվաքանակի մասով բավականին մեղմ են: Որպես պետական գրանցման նախապայման անդամների նվազագույն քանակը սահմանելիս, որպես

կանոն, հաշվի է առնվում նաև տվյալ երկրի բնակչության կամ ընտրողների թվաքանակը: Կուսակցության պետական գրանցման համար անդամների չափից մեծ քանակի վերաբերյալ պահանջի սահմանումը համարվում է էական խոչընդոտ նոր կուսակցությունների ստեղծման համար[1]:

Համազգային ընտրություններին մասնակցելու կամ պետական ֆինանսավորում ստանալու նպատակով միավորումը որպես կուսակցություն ճանաչելու համար ներկայացվող պետական գրանցման պահանջն ինքնին չի խախտում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 10 և 11-րդ հոդվածները: Այդուհանդերձ, պետական գրանցմանը վերաբերող ցանկացած պահանջ պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և պետք է համաչափ լինի այն նպատակներին, որին ձգտում են հասնել նշված միջոցի կիրառմամբ: Այդ պետությունները պետք է ձեռնպահ մնան կուսակցությունների նկատմամբ տարածքային ներկայացվածության և անդամների նվազագույն քանակի վերաբերյալ ծայրահեղ պահանջներ սահմանելուց: Պետական գրանցումը, որպես ընդհանուր կանոն, կարող է մերժվել միայն կուսակցությունների արգելման կամ լուծարման վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից նշված հիմքերով, այսինքն՝ երբ կուսակցությունը բռնության միջոցով փորձում է տապալել ժողովրդավարական սահմանադրական կարգը՝ դրանով վտանգելով Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքները և ազատությունները[2]:

Քաղաքական կուսակցությունների գործունեության իրավական կարգավորման մասին ԵԱՀԿ-Վենետիկ ղեկավար սկզբունքներով նախատեսվում է, որ պետական գրանցումից հետո այդ կարգավիճակը պահպանելու համար պահանջները պետք է հասցնել նվազագույնի (կետ 86): Կուսակցության պետական գրանցումից հետո որոշակի ժամանակահատվածում այն անդամների որոշակի քանակով և տարածքային ստորաբաժանումներով համալրելու պահանջի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ այն լրջորեն սահմանափակում է կուսակցական գործունեությունը տարածաշրջանային և տեղական մակարդակում: Բացի այդ, նման մոտեցումը սահմանափակում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից կուսակցություն ձևավորելու հնարավորությունը[3]:

Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ «ԵԱՀԿ անդամ պետությունները աստիճանաբար իջեցնում են կուսակցությունների թվաքանակին վերաբերող նվազագույն շեմը: Օրինակ՝ ՌԴ-ում 50 000-ից իջեցվել է 45 000-ի, ապա՝ 40 000-ի և 2012 թվականից հետո որպես նվազագույն շեմը սահմանափակվել է 500 անդամով»: Բուլղարիայում պետական գրանցման համար ներկայացվում է 2500 անդամի առկայության պահանջ: Լիտվայում ներկայացվում է առնվազն 1000 անդամի պահանջ (հոդվ. 5): Էստոնիայում կուսակցությունը ենթակա է պետական գրանցման, եթե ունի առնվազն 1000 անդամ: Վրաստանում, Մակեդոնիայում, Թուրքմենստանում և Լեհաստանում ևս պետական գրանցման համար ներկայացվում է 1000 անդամի առկայության պահանջ: Ավելի մեծ պահանջներ են նախատեսված, օրինակ, Մոլդովայում: Այստեղ խոսքը 5000 անդամի մասին է, որի վերաբերյալ, ի դեպ, Վենետիկը բացասաբար է արտահայտվել: Ուկրաինայում խոսք է գնում 10 000 անդամի մասին, որի վերաբերյալ ևս Վենետիկի բացասաբար է արտահայտվել: Կանադայում կուսակցության

---

[1] Տե՛ս Venice Commission, Opinion on the Draft Law on Political Parties and Socio-political organizations of the Republic of Moldova by Mr James Hamilton (Member Ireland), CDL-AD (2002)28, § 28:

[2] Տե՛ս Guidelines and Explanatory Report on Legislation on Political Parties: Some specific Issues, Venice, 12-13 March 2004, CDL-AD(2004)007, § B:

[3] Տե՛ս Code of Good Practice in the Field of Political Parties, (Venice, 12-13 December 2008), CDL-AD(2009)021, Explanatory Report, § 62-69:

ձևավորման համար պահանջվում է ընդամենը 250 անդամի առկայություն: Ավստրիայում և Գերմանիայում կուսակցության ձևավորման համար անդամների թվաքանակի մասով որևէ պահանջ չի ներկայացվում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Republican Party of Russia v. Russia գործով եվրոպական դատարանը Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում է համարել կուսակցությունը անդամների որոշակի քանակով և տարածքային ստորաբաժանումներով համալրելու պարտադիր պահանջը և պետական գրանցումից հետո նշված պահանջներին չբավարարելու հիմքով կուսակցության լուծարումը: Ըստ դատարանի դիրքորոշման՝ անդամների նվազագույն քանակի վերաբերյալ պահանջը կարող է արդարացված լինել, եթե այն անխոչընդոտ ապահովում է բազմաթիվ քաղաքական կուսակցությունների ձևավորումը և գործունեությունը: Դատարանը գտնում է, որ կուսակցության անդամների անհրաժեշտ քանակի ստուգմանն ուղղված միջամտությունը կուսակցությանը պահում է լուծարման մշտական վտանգի ներքո: Եթե նման ամենամյա ստուգումներն ուղղված են բնակչության կողմից բավարար աջակցության ստուգմանը, ապա նման աջակցության առկայությունը ստուգելու լավագույն միջոցը ընտրությունների արդյունքներն են[4]:

Եվրոպական զարգացած երկրներում կուսակցության պետական գրանցումից հետո, որպես կանոն, չեն առաջադրվում այնպիսի նոր պահանջներ, որոնց չիրագործումը կարող է հանգեցնել կուսակցության գործունեության հարկադիր դադարեցման: Կան նաև երկրներ, որտեղ կուսակցություններին ընդհանրապես պետական գրանցման պահանջ չի ներկայացվում: Օրինակ, Գերմանիայում, Շվեյցարիայում: Շվեդիայում կուսակցության գրանցումը վերջինին անվանման հետ կապված բացառիկ իրավունքները պաշտպանելու նպատակ է հետապնդում: Դանիայում և Նիդերլանդներում պետական գրանցումը պարտադիր չէ, սակայն ընտրություններին մասնակցելու նպատակով կուսակցությունները պետք է լրացնեն որոշ փաստաթղթեր[5]:

2) **Կուսակցության տարածքային ներկայացվածությունը**: Երկրի ամբողջ մասշտաբով կուսակցությունների տարածքային ներկայացվածության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը բազմիցս արտահայտել է իր բացասական դիրքորոշումը: Վերջինս նշում է, որ կուսակցության՝ երկրի ամբողջ տարածքում տարածքային ստորաբաժանումներ ունենալու պահանջը արգելափակում է տարածքային մակարդակում կուսակցությունների գործունեությունը: Ինչպես նշվեց, «Կուսակցությունների մասին» գործող օրենքը ևս նախատեսում է, որ պետական գրանցման պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո, կուսակցությունը պետք է ունենա տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, ներառյալ՝ Երևան քաղաքում: Հաշվի առնելով միջազգային փորձը, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշում՝ Նախագծում ներմուծվել է նոր իրավակարգավորում:

3) **Կուսակցություն հիմադրելու և կուսակցությանն անդամակցելու արգելքը:** «Կուսակցությունների մասին» ՀՀ գործող օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

Կուսակցության անդամ չեն կարող լինել դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները և օրենքով նախատեսված այլ անձինք:

Բանն այն է, որ 2015թ. դեկտ. 6-ի խմբագրությամբ Սահմանադրությունը, բացի վերը նշված հանրային ծառայողներից, կուսակցությանն անդամակցելու արգելքներ է նախատեսում նաև Սահմանադրությամբ նախատեսված այլ պաշտոնատար անձանց և պետական մարմինների

---

[4] Տե՛ս Case Republican Party of Russia v. Russia, 12.03.2011, N 12976/07:

[5] Տե՛ս Guidelines on Political Party Regulation, § 67, OSCE/ODIHR, Venice Commission, Adopted by the Venice Commission at its 84th Plenary Session, Venice, 15–16 October 2010

անդամների համար: Ուստի կուսակցությանն անդամակցելու արգելքները համալրվել են՝ նոր խմբագրությամբ Սահմանադրության պահանջներին համապատասխան:

4) Կուսակցության պետական գրանցման դիմումը վերադարձնելու և պետական գրանցման դիմումը մերժելու հիմքերի տարանջատումը: Գործող իրավակարգավորմամբ կուսակցության պետական գրանցումը կարող է մերժվել, եթե կուսակցության կանոնադրության կամ ծրագրի դրույթները հակասում են ՀՀ օրենքներին կամ չեն պահպանվել պետական գրանցման համար օրենքով սահմանված պահանջները:

Խնդիրը նրանում է, որ կուսակցությունների պետական գրանցումը, ընդհանուր կանոնի համաձայն, կարող է մերժվել միայն կուսակցությունների արգելման կամ լուծարման վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից նշված հիմքերով, այսինքն՝ երբ կուսակցությունը բռնության միջոցով փորձում է տապալել ժողովրդավարական սահմանադրական կարգը՝ դրանով վտանգելով Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքները և ազատությունները[6]: Իսկ ներկայացվող փաստաթղթերում առկա շտկելի թերությունները չպետք է հիմք հանդիսանան կուսակցության պետական գրանցումն մերժելու համար: Թեև նշված հարցի վերաբերյալ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում առկա են ընդհանուր բնույթի կարգավորումներ, այդուհանդերձ, կուսակցությունների մասով պետական գրանցումը անհիմն մերժելու դեպքերը կանխարգելելու նպատակով Նախագծով սահմանվել են համալիր կարգավորումներ:

5) Կուսակցության գործունեության կասեցումը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ գործող օրենքը չի սահմանում կուսակցությունների գործունեության կասեցման առանձին հիմքեր: Օրենքը միայն նախատեսում է, որ կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել սահմանադրական դատարանի որոշմամբ: Կուսակցության գործունեության կասեցման կամ արգելման հարցով սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված հիմքերով սահմանադրական դատարան կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Իսկ գործող օրենքի 9-րդ հոդվածը վերաբերում է այն կուսակցությունների ստեղծման և գործունեության արգելքին, որոնց նպատակները կամ գործունեությունն ուղղված են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի և Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության բռնի փոփոխությանը, զինված կազմավորումների ստեղծմանը, ազգային, ռասայական, կրոնական ատելության բորբոքմանը, բռնություն և պատերազմ քարոզելուն: Բանն այն է, որ նշված հիմքերը միջազգային պրակտիկայում առավելապես ընդունված են որպես կուսակցության գործունեության հարկադիր դադարեցման կամ արգելման հիմքեր: Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-669 որոշմամբ, անդրադառնալով կուսակցությունների գործունեության կասեցման և արգելման հարցերին, նշել է, որ *օրենքում որևէ անդրադարձ չի կատարվել կուսակցությունների գործունեության կասեցման ինստիտուտին, այն դեպքում, երբ Սահմանադրության պահանջն է օրենքով նախատեսել այն դեպքերը, որոնք կուսակցության գործունեության կասեցման կամ արգելման հիմք կարող են դառնալ*: Ավելին, 2015թ. դեկտ. 6-ի խմբագրությամբ Սահմանադրության

---

[6] Տե՛ս Guidelines and Explanatory Report on Legislation on Political Parties: Some specific Issues, Venice, 12-13 March 2004, CDL-AD(2004)007, § B:

46-րդ հոդվածը սահմանում է, որ *օրենքով սահմանված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ:*

Նշենք որ, կասեցման ինստիտուտը գերազանցապես նախատեսված է հետխորհրդային երկրներում: Որպես կասեցման ժամկետ ՌԴ-ում նախատեսված է մինչև 6 ամիս, Բելառուսում՝ 1-6 ամիս, Ղրղզստանում և Մոլդովայում՝ մինչև 6 ամիս:Կասեցման ինստիտուտ նախատեսող երկրներում կուսակցության գործունեությունը կասեցնելու իրավասությունը վերապահված է ընդհանուր իրավասության որևէ բարձրագույն դատարանի, որին այդպիսի դիմում ներկայացնելու իրավունք վերապահված է կուսակցության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնին, մասնավորապես՝ Արդարադատության նախարարությանը: Վերջինս օրենքով սահմանված որոշակի խախտումներ հայտնաբերելու դեպքում դիմում է դատարան և պահանջում որոշակի ժամկետով (առավելագույնը 6 ամիս) կասեցնել կուսակցության գործունեությունը: Կասեցման ժամանակահատվածում խախտումները չվերացնելու դեպքում դատարանն իրավունք է ստանում արգելել կուսակցության գործունեությունը:

Կուսակցությունների նկատմամբ կասեցումը կիրառվում է որպես խստագույն սանկցիա՝ ի պատասխան օրենսդրության լուրջ խախտումների: Ուստի Վենետիկի հանձնաժողովը հորդորում է կասեցումը կիրառել որպես վերջին միջոց՝ ներգործության այլ միջոցները սպառելուց հետո: Բոլոր դեպքերում, կուսակցության գործունեությունը կասեցնելու հիմքերը իրենց էությամբ տարբերվում են կուսակցության գործունեության արգելման հիմքերից: Ընդ որում, կասեցման ժամանակահատվածը չպետք է այնքան երկար լինի, որ փաստացի վերածվի կուսակցության գործունեության արգելքի:

Թեև կասեցման ինստիտուտ նախատեսող երկրներում կասեցման հիմքերը առանձնացված են կուսակցության արգելման հիմքերից և կասեցման պահանջները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում կուսակցությունը ենթակա է լուծարման, սակայն այսպիսի մոտեցումը չի կարելի ընդունելի լինել միջազգային մոտեցումների արդի զարգացումների համատեքստում: Կուսակցության գործունեությունը կարող է հարկադրաբար դադարեցվել, եթե վերջինս հակասահմանադրական է: Մինչդեռ կուսակցության գործունեությունը կասեցումը պետք է արդյունք լինի օրենսդրության պահանջների խախտումների, որոնց համար, որպես կանոն, նախատեսվում են վարչական պատասխանատվության միջոցներ և որոնք իրենց էության չեն համարվում հակասահամանադրական:

Լրացուցիչ նշենք, որ ի սկզբանե Վենետիկի հանձնաժողովի կարծիքին ներկայացված Մոլդովայի կուսակցությունների մասին օրենքի նախագծի այն դրույթի վերաբերյալ, ըստ որի՝ կուսակցության գործունեությունը ենթակա է կասեցման, եթե վերջինիս գործունեության մեջ հայտնաբերվում են օրենսդրության խախտումներ, Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ կասեցնելու լիազորությունը պետք է կիրառվի բացառապես լրջագույն խախտումների դեպքում[7]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծով սահմանվել են կուսակցությունների գործունեության կասեցման սպառիչ հիմքեր, որոնք կապված են օրենսդրության լուրջ խախտումների հետ:

6) Կուսակցության գործունեության արգելումը: Գործող օրենքի համաձայն՝ արգելվում է այն կուսակցությունների ստեղծումն ու գործունեությունը, որոնց նպատակները կամ գործունեությունն ուղղված են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի և Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության բռնի փոփոխությանը, զինված կազմավորումների ստեղծմանը, ազգային, ռասայական, կրոնական ատելության բորբոքմանը,

[7] Տե՛ս Venice Commission, Opinion on the Draft Law on Political Parties and Socio-political organizations of the Republic of Moldova by Mr James Hamilton (Member Ireland), CDL-AD (2002)28, § 41:

բռնություն և պատերազմ քարոզելուն:

Բանն այն է, որ 2015թ. դեկտ. 6-ի խմբագրությամբ Սահմանադրությունը սահմանում է, որ այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, հակասահմանադրական են և ենթակա են արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ: Այսինքն՝ արգելման ենթակա են այն կուսակցությունները, որոնք հակասահմանադրական են: «Հակասահմանադրական» եզրույթի բացահայտումն իրավակիրառ պրակտիկայում ամբողջապես թողնվում է ՀՀ Սահմանադրական դատարանին, որը ենթակա է գնահատման յուրաքանչյուր դեպքում:

7) **Կուսակցության գործունեության արգելման իրավական հետևանքները:** Խնդիրը նրանում է, որ կուսակցության գործունեության արգելման դեպքում կուսակցության գործունեությունն հարկադրաբար դադարեցվում է, և կուսակցությունը ենթակա է լուծարման: Կուսակցությունը՝ որպես կազմակերպաիրավական միավոր, դադարում է գոյություն ունենալ: Ուստի նման պարագայում առաջ է գալիս տվալ կուսակցությունը ներկայացնող պատգամավորի մանդատի պահպանման հարցը:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և մի շարք ազգային դատարաններ ամրագրում են այն սկզբունքը, որ ընտրված պատգամավորի մանդատը պահպանելը կախված չէ նրա կուսակցության հետագա գործունեությունից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ընտրված լինելու իրավունքը յուրաքանչյուր մարդու անհատական իրավունքն է[8]: Sadak and others v. Turkey Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործով Թուրքիայի սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչված կուսակցության լուծարումից հետո այդ կուսակցության անդամներ հանդիսացող պատգամավորների լիազորությունները դադարեցվել են: Եվրոպական դատարանը գտել է, որ կիրառվող միջամտությունը չի եղել համաչափ: Թուրքիայի Սահմանադրության 84 հոդվածի 5-րդ մասը որպես կուսակցության լուծարման հետևանք նախատեսում էր միայն կուսակցության նախագահի և կուսակցության կենտրոնական մարմնի անդամների լիազորությունների դադարեցում, որոնց խոսքերը և արարքները հիմք էին հանդիսացել կուսակցությունը հակասահմանադրական ճանաչելու համար: Մինչդեռ պատգամավորական մանդատից զրկվել էին կուսակցության շարքային անդամները: Ուստի տեղի էր ունեցել 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված՝ ընտրված լինելու իրավունքի խախտում: Ավելին, դեռևս 2002թ. Կուսակցությունների մասին ՀՀ օրենքի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված եզրակացությամբ նշվում է, որ խնդրահարույց է այն դրույթը, ըստ որի կուսակցությունը ներկայացնող պատգամավորները մեխանիկորեն կորցնում են իրենց մանդատը կուսակցության արգելման, լուծարման և վերակազմակերպման դեպքում[9]: Ուստի Նախագծով ելակետ է ընդունվել այն մոտեցումը, որ կուսակցության գործունեության արգելումը չի կարող հիմք հանդիսանալ պատգամավորի լիազորությունները դադարեցնելու համար:

Առաջարկվող լուծումները

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով մշակվեց «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի շրջանակներում առաջարկվում են, մասնավորապես, հետևյալ լուծումները՝

1) Նախագծով կուսակցության պետական գրանցման համար անհրաժեշտ հիմնադիր անդամների թվաքանակը սահմանափակվել է 1000-ով, որոնք ներկայացնում են Երևան քաղաքը կամ

---

[8] Տե՛ս Проект совместного экспертного заключения по проекту закона о политических партиях в Кыргызской Республике, CDL(2009)105, 25 июя 2009г., пункт 45:

[9] Տե՛ս CDL (2002) 90, 17 June 2002, կետ 14:

Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ը կամ Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ը:

2) Պետական գրանցման պահին կուսակցությունը պետք է ունենա նաև տարածքային ստորաբաժանումներ Երևան քաղաքում կամ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում կամ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում: Պետական գրանցումից հետո կուսակցության՝ որպես իրավաբանական անձի կարգավիճակը պահպանելու համար նոր պահանջներ չեն առաջադրվում:

3) Նախագծով կուսակցություն հիմանդրելու և անդամակցելու արգելքները վերաբերում են ինչպես դատավարներին, դատախազներին, քննիչներին, այլև իրենց լիազորությունների իրականացման ընթացքում կուսակցության անդամ չեն կարող լինել Հանրապետության նախագահը, Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները, Հաշվեքննիչ պալատի անդամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները: Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի՝ օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ՝ Նախագծով սահմանվել է, որ այլ օրենքներով կարող են սահմանվել կուսակցություն հիմնադրելու կամ կուսակցությանն անդամագրվելու իրավունքի այլ սահմանափակումներ՝ այդ կերպ հարցի կարգավորումը թողնելով այլ օրենքներին:

4) Պետական լիազոր մարմինը մերժում է կուսակցության պետական գրանցումը, եթե կուսակցության կանոնադրության կամ ծրագրի դրույթները ուղղված են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի բռնի տապալմանը կամ կուսակցության հիմնադիրների թիվը չի համապատասխանում կուսակցությունների մասին օրենքի պահանջներին, կուսակցության հիմնադիր համագումարում որոշում չի ընդունվել կուսակցության ստեղծման, կուսակցության ծրագրի ընդունման և կանոնադրության հաստատման, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաև նշանակված (ընտրված) չէ մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար) կամ կուսակցության պետական գրանցման դիմումը ներկայացվել է կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից 3 ամիս անց:

Պետական գրանցման համար օրենքով սահմանված այլ պահանջների խախտման դեպքում պետական լիազոր մարմինը վերադարձնում է պետական գրանցման դիմումը: Հայտնաբերված թերությունները շտկելու և պետական գրանցման դիմումը 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին լիազոր մարմին ներկայացնելու դեպքում այն համարվում է ընդունված սկզբնական ներկայացման օրը և պետական տուրք կրկին չի գանձվում: Նշված ժամկետի ավարտից հետո՝ պետական տուրքի վճարմամբ, պետական գրանցման վերադարձված դիմումը կարող է կրկին լիազոր մարմին ներկայացվել կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում:

5) Որպես կուսակցության գործունեության կասեցման հիմք նախատեսվել է գործունեության ընթացքում օրենքի կոպիտ խախտում թույլ տալը: Որպես օրենքի կոպիտ խախտում

հանդես է գալիս կուսակցության կողմից նվիրատվությունների տնօրինման կամ կուսակցության տարեկան հաշվետվությունների հրապարկման կամ օրենքով սահմանված փաստաթղթերը պետական լիազոր մարմնին տրամադրելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում խախտումը չվերացնելը, ինչպես նաև կուսակցության հիմնադրման կամ պետական գրանցման ժամանակ օրենքի այնպիսի խախտում թույլ տալը, որը եթե հայտնի լիներ պետական գրանցման պահին, կուսակցությունը չէր գրանցվի: Միաժամանակ, սահմանվել է, որ կասեցման հիմքերը վերացնելու նպատակով Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանվում է ողջամիտ ժամկետ: Կուսակցության կողմից կասեցման հիմքերի վերացման վերաբերյալ ապացույցները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան: Կասեցման հիմքերը վերացված գնահատվելու դեպքում Սահմանադրական դատարանը կայացնում է որոշում կուսակցության գործունեությունը վերսկսված համարելու մասին: Կասեցված հիմքերը դեռևս առկա գնահատվելու դեպքում կասեցման հիմքերը վերացնելու նպատակով Սահմանադրական դատարանը կուսակցությանը տրամադրում է ողջամիտ ժամկետ: Միաժամանակ, կասեցման ժամանակահատվածում կուսակցությանն արգելվում է իրականացնել ցանկացած գործունեություն, բացառությամբ այն գործողությունների, որոնք անհրաժեշտ են կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացնելու համար և կուսակցության՝ որպես կազմակերպահիրավական միավորի գոյությունն ապահովելու համար (ի կատարումն քաղաքացիահիրավական, աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունների, պատճառված վնասի հատուցման պարտավորությունների, հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված պարտադիր այլ վճարների վճարման պարտավորությունների և այլ):

6) Նախագծով սահմանվել է, որ արգելման ենթակա է այն կուսակցությունների գործունեությունը, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ կուսակցության գործունեությունը արգելելու դեպքում կուսակցության գործունեությունը համարվում է դադարեցված, և այն ենթակա է լուծարման:

Ակնկալվող արդյունքը

Սույն օրենսդրական նախաձեռնությամբ «Կուսակցությունների մասին »ՀՀ օրենքը կհամապատասխանեցվի ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև միջազգային փաստաթղթերի պահանջներին՝ խթանելով բազմակուսակցական համակարգի հետագա զարգացմանը:

Առաջարկվող փոփոխություններով, մասնավորապես՝

1) կդյուրացվեն և կպարզեցվեն կուսակցությունների հիմնադրման և պետական գրանցման հետ կապված հարցերը.

2) կապահովվեն իրավական երաշխիքները կուսակցությունների պետական գրանցման անհիմն մերժումները բացառելու համար.

3) համալիր իրավական կարգավորում կստանա կասեցման ինստիտուտ, որով կապահովվի վերջինիս գործնական կիրառությունը.

4) կհստակեցվեն կուսակցությունների գործունեության կասեցման և արգելման արդյունքում առաջացող բացասական հետևանքները.

5) կստեղծվեն կուսակցությունների գործունեության անխոչընդոտ իրականացման համար հավասար և ոչ խտրական պայմաններ: